10057974

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՖԻՆԱՆՍՆԵՐԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ
ՆԱԽԱՐԱՐԻ ՏԵՂԱԿԱԼ

МИНИСТЕРСТВО ФИНАНСОВ РЕСПУБЛИКИ АРМЕНИЯ
**ЗАМЕСТИТЕЛЬ МИНИСТРА**

MINISTRY OF FINANCE OF THE REPUBLIC OF ARMENIA
**DEPUTY MINISTER**

0010, Երևան, Մելիք-Ադամյան փող. 1
0010, Ереван, ул. Мелик-Адамяна 1
1 Melik-Adamyan str., Yerevan, 0010
Հեռ./Тел./Phone (+374 60) 700 103

07.11.13 №6.ԱՎ/6.2/

Ձեր № /16807-13

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԲԱՆԿԻ
ՆԱԽԱԳԱՀԻ ՏԵՂԱԿԱԼ
ՊԱՐՈՆ ՆԵՐՍԵՍ ԵՐԻՑՅԱՆԻՆ

Հարգելի պարոն Երիցյան

Ս.թ. հոկտեմբերի 28-ի Ձեր թիվ 15.1-07/0197-13 գրությամբ ներկայացված՝ «Ապահովագրության և ապահովագրական գործունեության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում լրացումներ կատարելու մասին» և «Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքում լրացումներ կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքների նախագծերի վերաբերյալ հայտնում ենք, որ առաջարկություններ և դիտողություններ չունենք:

Միաժամանակ, կից ներկայացնում ենք վերոնշյալ օրենքների նախագծերի՝ բյուջետային բնագավառում կարգավորման ազդեցության գնահատման վերաբերյալ Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության եզրակացությունը՝ կազմված Հայաստանի Հանրապետության կառավարության 2009 թվականի սեպտեմբերի 10-ի «Նորմատիվ իրավական ակտերի նախագծերի բյուջետային բնագավառում կարգավորման ազդեցության գնահատման կարգը հաստատելու մասին» թիվ 1021-Ն որոշմամբ սահմանված կարգի համաձայն:

Առդիր՝ 1 թերթ:

ՀԱՐԳԱՆՔՈՎ՝

ՍՈՒՐԵՆ ԿԱՐԱՅԱՆ

Կատ՝ Հարկային քաղաքականության բաժին
Հեռ.՝ (060) 700-337

**Եզրակացություն**

«Ապահովագրության և ապահովագրական գործունեության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում լրացումներ կատարելու մասին» և «Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքում լրացումներ կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքների նախագծերի՝ բյուջետային բնագավառում կարգավորման ազդեցության գնահատման վերաբերյալ

Նախագծերով առաջարկվում է «Ապահովագրության և ապահովագրական գործունեության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում և Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքում կատարել լրացումներ, որոնց համաձայն նախատեսվում է սահմանել ապահովագրության ոլորտում սպառողների շահերի պաշտպանության հստակ մեխանիզմներ և ապահովել Հայաստանի Հանրապետությունում ապահովագրության ոլորտում սպառողների շահերի պաշտպանությունը և ծառայությունների բարձր որակը:

Հաշվի առնելով վերոգրյալը՝ գտնում ենք, որ նախագծերի ընդունումը պետական բյուջեի եկամուտների և ծախսերի վրա կունենա չեզոք ազդեցություն: